ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/03

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Մասնակից՝ «ՀամբարյանՇին» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի միջնակարգ դպրոցի «Սանհանգույցների վերանորոգման» աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21621-2021 գրությամբ «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 24.12.2021թ. թիվ Ե/01/2329-21 գրության հիման վրա, 03.01.2022թ.-ին «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.01.2022թ.-ին:

04.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/03 համարի ծածկագիրը:

13.01.2022թ.-ին և 02.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 13.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.02.2022թ.-ին:

2. **<u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 24.12.2021թ. թիվ Ե/01/2329-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ ՀՏԶՀ) «ՀամբարյանՇին» ՍՊԸ–ի հետ 2021թ. ապրիլի 23-ին կնքել է «ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի միջնակարգ դպրոցի «Սանհանգույցների վերանորոգման» աշխատանքների կատարման պետական գնման ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 պայմանագիրը: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 75 օր: Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից, այն է՝ 2021 թվականի ապրիլի 23-ից, ավարտը նախատեսված էր 2021 թվականի հուլիսի 07-ին: Սակայն, փաստացի շինարարական աշխատանքները մինչ օրս ավարտված չեն:

Պայմանագրով նախատեսված աշխատանքները ավարտելու համար ժամկետ տրամադրելու և տույժերի կիրառման մասին ՀՏԶՀ-ն ս.թ. հուլիսի 23-ին, օգոստոսի 11-ին, հոկտեմբերի 05–ին և հոկտեմբերի 26-ին «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին է ներկայավրել

համապատասխանաբար ՈԵ/01/1337-21, ՈԵ01/1460-21, ՈԵ/01/1801-21 և ՈԵ/01/1927-21 գրությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 Պայմանագրով նախատեսված վերանորոգման աշխատանքները ժամանակին չեն ավարտվել և դրանց ընթացքի մասին Պատվիրատուի կողմից ներկայացվել են համապատասխան գրություններ, ինչպես նաև այն, որ մինչև ս.թ. դեկտեմբերի 01-ը իրականացվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների 68 տոկոսը, որի համար Կապալառուին 2021 թականի հուլիսի 06-ին վճարված 1,684,332 դրամի հետ մեկտեղ ենթակա է վճարման ևս 2,571,310 դրամ և հիմք ընդունելով ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2 պայմանագրի 2.1.3 (բ) ենթակետի, 5.2, 5.3 և 7.9 կետերի դրույթները կայացվել է հետևյալ որոշումը.

1. Համարել պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՈՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/43 Պայմանագիրը լուծված.

2. Պայմանագրով նախատեսված կատարման ժամկետը խախտելու համար սահմանել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար չկատարված աշխատանքի գնի 0,05% չափով, որը 104 աշխատանքային օրվա համար կազմում է՝ 236,570 դրամ.

3. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գումարի, այն է՝ 6,233,759 դրամի 0,5 տոկոսի չափով, որը կազմում է՝ 31,169 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սկսել գործընթաց «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի

թիվ 26/26-1/21621-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/03 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի միջև 23.04.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի միջնակարգ դպրոցի «Սանհանգույցների վերանորոգման» աշխատանքների» կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

iv. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 75 օր:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 10.12.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 07.12.2021թ.-ի թիվ Ե/01/2206-2021 ծանուցման համաձայն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի հետ 2021թ.-ի ապրիլի 23-ին կնքել է «ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր համայնքի միջնակարգ

դպրոցի «Սանհանգույցների վերանորոգում» վերանորոգման աշխատանքների կատարման պետական գնման «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» պայմանագիրը: Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 75 օր: Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից, այն է՝ 2021թ.-ի ապրիլի 23-ից, ավարտը նախատեսված էր 2021թ.-ի հուլիսի 07-ին: Սակայն, փաստացի շինարարական աշխատանքները մինչ օրս ավարտված չեն: Պայմանագրով նախատեսված աշխատանքները ավարտելու համար ժամկետ տրամադրելու և տույժերի կիրառման մասին ՀՏՁՀ-ն ս.թ. հուլիսի 23-ին, օգոստոսի 11-ին, հոկտեմբերի 05-ին և հոկտեմբերի 26-ին «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին է ներկայացվել համապատասխանաբար Nb/01/1337-21, NU01/1460-21, Nb/01/1801-21 և Nb/01/1927-21 գրությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» Պայմանագրով նախատեսված վերանորոգման աշխատանքները ժամանակին չեն ավարտվել և դրանց ընթացքի մասին Պատվիրատուի կողմից ներկայացվել են համապատասխան գրություններ, ինչպես նաև այն, որ մինչև ս.թ. դեկտեմբերի 01-ը իրականացվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների 68 տոկոսը, որի համար Կապալառուին 2021թ.-ի հուլիսի 06 վճարված 1,684,332 դրամի հետ մեկտեղ ենթակա է վճարման ևս 2,571,310 դրամ, և հիմք ընդունելով «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» պայմանագրի 2.1.3 (բ) ենթակետի, 5.2, 5.3 և 7.9 կետերի դրույթները կայացվել է որոշում.

1. Համարել պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» Պայմանագիրը լուծված.

vi. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 24.12.2021թ.-ին թիվ Ե/01/2329-21 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21621-2021 գրությամբ «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ի միջև 23.04.2021թ.-ին կնքված թիվ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-ՆՏ-2021/2» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով աշխատանքի կատարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 75 օր:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 10.12.2021թ.-ին հրապարակվել է պայմանագրի միակողմանի լուծման մասին 07.12.2021թ.-ի թիվ Ե/01/2206-2021 ծանուցումը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 24.12.2021թ.-ին թիվ Ե/01/2329-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 10.12.2021թ.-ին՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով, սակայն Հայաստանի տարածքային

զարգացման հիմնադրամի կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 24.12.2021թ.-ին թիվ Ե/01/2329-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և

քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.01.2022թ.-ի թիվ 26/26-1/21621-2021 գրությամբ «ՀամբարյանՇին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/03 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**